

- **Առաջին Շրջան** (1871 – 1876 թ.),

երբ Նիցշե փիլիսոփայ Շոպենհաուերի եւ երաժշտագետ-երգահան Վակնե-րի ազդեցութիւնը կը կրէր: Այս շրջանի գլխաւոր երկերն են.- «Ողբերգութեան ծնունդը՝ երաժշտութեան ոգիէն» (գերմ. բնագիր՝ „Die Geburt der Tragödie aus dem Geiste der Musik“) եւ «Անժամանակ դիտարկումներ» (գերմ. բնագիր՝ „Unzeitgemäßen Betrachtungen“):

- **Երկրորդ Շրջան** (1877 – 1882 թ.),

երբ Նիցշե կ'ազատէր վերոյիշեալ ազդեցութիւններէն եւ շինիչ կամքով մը ու միշտ հետամուտ ըլլալով ճշմարտացիութեան կը սկսէր պայքարիլ՝ բարոյական ու կրօնական անկման դէմ: Նիցշեի համաձայն, բարոյականութիւնը յարաբերական է, նկատի ունենալով դարաւոր պատմութեան ընթացքը եւ տարբեր ընկերային հասարակութիւնները: Նիցշե կը փորձէ բարոյականութեան նպատակի դիմակազերծումը, յայտնաբերելով անոնց ետին թաքնուած նպատակներու իսկական արժէքը եւ կը ջատագովէ *բոլոր արժէքներու վերաբժեւորում* մը, (գերմ.՝ Umwertung aller Werte, անգլ.՝ Transvaluation of all values): Այս շրջանի գլխաւոր երկերն են.- «Մարդկային – չափազանց մարդկային» (գերմ. բնագիր՝ „Menschliches – Allzumenschliches“), «Արշալոյս – խոհեր բարոյական նախապաշարումներուն մասին» (գերմ. բնագիր՝ „Morgenröte – Gedanken über die moralischen Vorurteile“), «Զուարթ Գիտութիւնը» (գերմ. բնագիր՝ „Die fröhliche Wissenschaft“):

- **Երրորդ Շրջան** (1883 – 1888 թ.),

երբ Նիցշե կը հասնի հրապարակումներու իր գագաթնակէտին եւ ցարդ յայտարարուած ախտաճանաչումներուն կը յաջորդեն դարմանական եղանակները: Եթէ ախտաճանաչումը ոչնչապաշտութիւնն⁽³⁶⁾ (սիհիլիզմ, Nihilism) է, որ ընդհանուր ամմամբ կը ժխտէ գոյութիւնը, իմացութիւնը եւ բարոյական ու դրական արժէքները, Նիցշե կու գայ ծանուցանել դարմանումը, որ կը կեդրոնանայ «կամք առ իշխանութիւն» գաղափարին շուրջ: Այս շրջանի գլխաւոր երկերն են.- «Այսպէս խօսեցաւ Զրադաշտը» (գերմ. բնագիր՝ „Also sprach Zarathustra“), «Բարոյականութեան ծննդաբանութեան շուրջ» (գերմ. բնագիր՝ „Zur Genealogie der Moral“) եւ «Կամք առ իշխանութիւն» (գերմ. բնագիր՝ „Wille zur Macht“), :

Նիցշե, տաղանդաւոր այս անձնաւորութիւնը, իր 55-ամեայ կեանքի վերջին տասնամեակը (1889 – 1900 թ.) կ'անցնէ խելագարուած՝ մտային ու հոգեկան մթազնման մէջ:

(36) **Ոչնչապաշտութիւն** (սիհիլիզմ, Nihilism) հասկացութեան մասին տե՛ս Մաս – 9, Էջ 512: